ՔԵԹԻԻ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑԸ

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Քեթիի կիկլոպյան ամրոցը գտնվում է համանուն գյուղից 2 կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակերևույթից 2000 մ բարձրության վրա։ Այն տեղադրված է Շիրակի լեռնաշղթայի «Աղնախներ» կոչվող երկու բարձունքների գագաթներին, որոնք շրջապատի նկատմամբ ունեն գերիշխող դիրք (նկ. 1)[1]։

Հարավ-արևելյան ամրաշինությունը փոքր է, զբաղեցնում է 600 քառ մ տարածություն և մյուսից բաժանվում է թամբաձև գոգավորությամբ։ Հյուսիս-արևմտյանը՝ միջնաբերդը, ավելի մեծ է և զբաղեցնում է 1,2 հեկտար տարածություն։ Այն պարսպապատված է և ունի բլրի եզրագծին համապատասխան հատակագիծ։ Գլխավոր մուտքի մոտ պարիսպը ամրացված է երկու քառանկյունի փոքր աշտարակներով։ Բարձունքի հյուսիսային և հյուսիս-արևելյան կողմերում կան չորս շարք դարավանդապատեր, որոնք պաշտպանել են բարձունքի լանջերը։ Նման երկու շարք դարավանդապատեր նկատվում են և հարավ-արևմտյան լանջերին (նկ. 1)։ Հարավ-արևելյան ամրաշինության հյուսիսային կողմից սկսվող և նույն ուղղությամբ ձգվող պարիսպը միաշար է ու դրված է թեք լանջերին կառուցված հարթակների վրա։ Այն ունի մոտ 110 մ երկարություն։ Չնայած այլ հատվածներում դրա մնացորդները չեն պահպանվել, սակայն, տեղանքից ելնելով, կարելի է ենթադրել, որ ամրոցը զբաղեցրել է շուրջ 7 հեկտար տարածություն, որի ներսում գտնվել են վերոհիշյալ երկու ամրաշինությունները։ Նման պարսպի առկայությունը ցույց է տալիս, որ այս երկու ամրաշինությունները ներառված են եղել մի ընդհանուր համալիրի մեջ։

Միջնաբերդն առավել լավ պաշտպանված կառույց է։ Բացի նշված պարիսպից և դարավանդների վրա կառուցված պաշտպանական համակարգից, այն ունի նաև առանձին հատվածներում ներս և դուրս ընկած մասեր և կեղծ աշտարակներով պարիսպ, որը շարված է արտանքները մանր քարերով լցված բնական որձաքարի երկու շարքով։ Պարսպի լայնությունն է 1,8 մ (երբեմն հասնում է 4 մետրի) և կառուցված է լեռան գագաթի եզրագծով, որն առանձին հատվածներում կցված է անմատչելի ժայռերին։ Միջնաբերդն ունի երկու մուտք։ Առաջինը գտնվում է պարսպի հյուսիս-արևմուտքում և երկու կողմերից պաշտպանված է խոշոր որմահերցերով, որոնք ունեն 4—7 մ երկարություն և 1 մ լայնություն։ Միջնաբերդի պաշտպանական համալիրը լրացուցիչ ամրացված է մուտքից 12 մ հեռավորությամբ կառուցված անկյունաձև և մուտքից 20 մ հեռավորության վրա գտնվող 60 մ երկարությամբ հյուսիսից-հարավ ձգվող խուլ պատով։ Սրանց ներառած տարածությունները կատարել են «քարե պարկի» դեր, ուր թշնամին ներխուժելու դեպքում հանդիպում էր խուլ պատերի և չորս կողմից ընկնում հարվածի տակ։ Ամրաշինական այս հնարքը տարածված էր Հայաստանի ուշ բրոնզի և երկաթի ժամանակաշրջանի[2], ինչպես նաև՝ ուրարտական[3] ամրոցներում։ Երկրորդ մուտքը գտնվում է միջնաբերդի արևմտյան պարսպի հարավային հատվածում և ունի 2 մ լայնություն։

---

[1] *Քեթիի ամրոցի և բնակատեղիների չափագրությունները կատարել է ճարտարապետ Կ. Կ. Ղաֆադարյանը։*

[2] С. А. Есаян, Древняя культура племен северо-восточной Армении, Ереван, 1976, с. 115 и сл.

[3] А. А. Мартиросян, Аргиштихинили, Ереван, 1974, рис. 11.

Այն ներսի կողմից պաշտպանված է 17 մ երկարությամբ երկու զուգահեռ պատերով, որոնք, հավանաբար, նույն «քարե պարկի» դերն են կատարել։ Այսպիսի դռներ-«միջանցքներ» հանդիպում են հյուսիս-արևելյան Հայաստանի նշված ժամանակաշրջանի մի շարք ամրոցներում, որոնք կառուցված են պարբսպի արտաքին կողմում, երբեմն էլ ներսում[4]։ Միջնաբերդում և պահակային ամրոցում պահպանվել են բազմաթիվ ուղղանկյունաձև կացարանների հետքեր, իսկ դրանց միջև եղած տարածությունում այդպիսիք բացակայում են։



Նկ. 1

Մեր կարծիքով, դա բացատրվում է տեղանքի խիստ թեքությամբ, որը հնարավորություն չի տվել շինություններ կառուցելու։ Այս տարածքը, հավանաբար, պատերազմների ժամանակ եղել է շրջակայքի բնակիչների և կենդանիների պատսպարան։

Քեթիի ամրոցն իր ձևերով և շինարարական տեխնիկայով նման է Շիրակի մի շարք ամրոցներին, ինչպիսիք են՝ Փոքր բերդի և Գառնահովիտի մ. թ. ա. XIII—X դդ. ամրոցները, Սառնաղբյուր, Լեռնակերտ գյուղերի շրջակայքում գտնվող՝ մ. թ. ա. XVIII—XV դդ. թվագրվող, Շրեշբլուր, Մեծ բերդ, Վերի բերդ և Վարի բերդ կոչվող ամրոցները[5] և այլն։ Ըստ ճարտարապետ Կ. Կ. Ղա-

4 С. А. Есаян, նշվ. աշխ., էջ 15.

5 Կ. Կ. Ղաֆադարյան, Դիտողություններ ուրարտական ամրաշինության վերաբերյալ («Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1972, № 1, էջ 133)։

ֆաղարյանի դասակարգման, վերոհիշյալ ամրոցների պարիսպները ներկայացնում են Հայկական լեռնաշխարհի ամրաշինական կառույցների զարգացման երկրորդ փուլը և լայն տարածում են գտել սկսած մ. թ. ա. XVIII դ.[6]։ Քեթիի կիկլոպյան ամրոցը սերտ աղերսներ ունի նաև Սևանի ավազանի[7] և Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների բազմաթիվ ամրոցների[8] հետ, որոնց հատուկ են մինչուրարտական ամրաշինության առանձնահատկությունները։

Քեթիի կիկլոպյան ամրոց-բնակատեղիի ժամանակագրական պատկանելության, ճարտարապետական հատակագծային առանձնահատկությունների, նյութական մշակույթի, ուղղահայաց և տարածական սփռվածության սահմանների որոշման նպատակով նրա տարածքն ուսումնասիրվեց ոչ մեծ ծավալի պեղումների և ստուգողական փոսորակների միջոցով։ Միջնաբերդի կենտրոնական մասում պեղումների համար ընտրվեց շուրջ 200 քառ. մ մակերես, որտեղ բացվեց 0,3—1,8 մ հզորությամբ մշակութային շերտով 7 կացարան։ Կացարաններից առաջին երեքը միմյանց հետ հաղորդակցվում են դռան բացվածքներով և կազմում են մի բնակելի համալիր, իսկ մյուս երեքը (№ 4—7-ը) առանձին քառանկյունաձև շինություններ են։ № 1 և 4 կացարանների արևելյան պատերը, տեղանքի պատճառով, կոր են։ № 1 կացարանը զբաղեցնում է 44 քառ. մ մակերես, որի պատերը շարված են ճեղքված, անմշակ որձաքարերով և ավազաքարերով ու ծեփված են հաստ կավածեփով։ Հարավային և արևմտյան պատերը արտաքուստ հենված են արհեստական կտրվածքներին։ Հատակը կավածեփ է, որի տակ, հարթեցման նպատակով, քարալիցք է արված։ Այս կացարանի արևելյան և հյուսիսային պատերի մեջ կան մուտքեր, որոնցով այն կապվում է № 2 և № 3 կացարանների հետ։ Մուտքերից արևելյանն ունի 0,8, իսկ հյուսիսայինը՝ 0,9 մ լայնություն։ № 1 կացարանի հարավ-արևմտյան պատին կից կառուցված է 2,3 մ երկարությամբ, 1,2 մ լայնությամբ տուֆ քարերով շարված հարթակ (պաշտամունքային անկյուն), որի փլատակներից գտնվեց կուռքանման խիստ քայքայված մի քար։ Հարթակից հյուսիս, արևմտյան պատի դիմաց, բացվեց 0,4 մ լայնությամբ և 0, 3 մ բարձրությամբ քարաշար նստարան, իսկ հյուսիսային պատի դիմաց՝ քարաշեն օջախ։ Վերջինիս մոտ հայտնաբերվեցին սաջերի բեկորներ և որձաքարե մեկ սալ, որի վրա ակնառու դիտվում են կրակի վրա երկար դրվելու հետքեր։ Բացի վերոհիշյալներից, կացարանի կենտրոնական մասում դրված էր ավազաքարից պատրաստված, 0,7 մ բարձրությամբ, հղկած իրանով երկարավուն քար (կուռք)։ Այս կացարանի պաշտամունքային անկյան նմանակները բացվել են Հայրիվանքի մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող հուշարձանում[9], Թեյշեբաինիում[10], Օշականում[11] և Արգիշտիխինիլիի քաղաքային թաղամասի բազմաթիվ տներում[12]։ Նստարանի զուգահեռները առկա են Շիրակավանի ինչպես վաղ բրոնզեդարյան, այնպես էլ մ. թ. ա. I հազարամյակի կացարաններում[13], Արգիշտի-

---

[6] Նույն տեղում։

[7] Գ. Հ. Միքայելյան, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Երևան, 1969։

[8] Ս. Ս. Ջիլինգարյան, Նոյեմբերյանի շրջանի կիկլոպյան կառույցները (ՊԲՀ, 1968, № 1, էջ 221 և հաջ.), С. Есаян, Г. Микаелян, О некоторых циклопических крепостях Ноемберяна (ПБХ, 1972, № 1, էջ 269—276; С. А. Есаян, Древняя культура племен..., с. 15—99.

[9] Պեղումները՝ Հ. Մնացականյանի (չհրատարակված նյութեր)։

[10] А. А. Мартиросян, Город Тейшебаини, Ереван, 1961, с. 13.

[11] Ս. Ա. Եսայան, Օշականի պալատի պեղումները և տնային պաշտամունքի մի քանի ձևերի մասին (ՀՍՍՀ-ում 1978—1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան, 1981, էջ 9—10)։

[12] Պեղումները՝ Հ. Մարտիրոսյանի (չհրատարակված նյութեր)։

[13] Պեղումները՝ Ռ. Թորոսյանի, Օ. Խնկիկյանի, Լ. Պետրոսյանի (չհրատարակված նյութեր)։

խինիլիի քաղաքային թաղամասի բնակելի տներում[14], Օշականում[15] և այլուր։ Ինչ վերաբերում է № 1 կացարանի կուռքանման քարին, ապա դա, հավանաբար, խորհրդանշել է պտղաբերության գաղափարը, որը բնորոշ է Հայաստանի նախնադարյան բնապաշտների հավատալիքներին։ Օշականում օջախների, հացահատիկի հորերի, կարասների մոտ ու սրբազան անկյուններում հայտնաբերված քարե բազմաթիվ կուռքերը ճանաչված են որպես արևի, պտղաբերության և տնային օջախի պաշտամունքի հետ կապվող սյուն-քարեր[16]։ Նման քարե կուռքեր են հայտնաբերվել և Թազաքենդում[17] և Արգիշտիխինիլիում[18]։ Քեթիում ծիսական անկյունների առկայությունը ցույց է տալիս, որ դրանք պատկանում են Հայաստանի վերը նշված վայրերում բացված սրբարանների թվին։

№ 1 կացարանում հայտնաբերվեցին նաև որձաքարից պատրաստված նավակաձև աղորիքներ, վանակատի ցլեպներ, մանգաղի կայծքարե ներդիրներ, տուֆե ծանրոց կախիկ, գետաքարից սրոց, կոկիչներ, հավանգի բեկոր, սանդեր, սանդակոթեր, տրորիչներ, հենակ, ոսկրե նետասլաքներ, իլիկի գլուխ և մեծ քանակությամբ սև ու գորշ գծազարդ, ալիքազարդ, հատիկազարդ կճուճների, քրեղանների ու թասերի բեկորներ։

№ 2 կացարանը գտնվում է № 1-ի հյուսիսային կողմում և միմյանցից յուժանված են 0,5 մ հաստությամբ միաշար պատով։ Սրա արևմտյան պատը ևս դրսի կողմից հենված է արհեստական կտրվածքին։ Կացարանը բացված է կիսով չափ։ Այստեղ մշակութային շերտի հզորությունը հասնում է 1,8 մ-ի, որտեղից հայտնաբերվել են վանակատի ցլեպներ, մանգաղի կայծքարե ներդիր և կճուճների ու թասերի բեկորներ։

№ 3 կացարանը գտնվում է № 1-ի արևելյան կողմում։ Այս երկու կացարանները, ինչպես նշվեց, միմյանց հետ կապված են 0,8 մ լայնությամբ դռան բացվածքով։ 3-րդ կացարանի պատերը շարված են բնական որձաքարի երկու շարքով, որոնց միջև լցված է հողի լիցք։ Հատակագիծը քառանկյունաձև է, որի անկյունները քիչ կլորացված են։ Պահպանվել են միայն պատերի հիմնամասերը։ Նյութական մշակույթի նմուշներով սակավ հագեցված 0,3 մ շերտը հեռացնելուց հետո, արևելյան պատի երկարությամբ, բացվեց 0,4 մ լայնությամբ քարաշար նստարան։ Այս կացարանից հայտնաբերվեցին միայն կըճուճների և քրեղանների բեկորներ։

№ 4 կացարանը գտնվում է նախորդի հյուսիսային կողմում և կից է №1-ի արևելյան պատին։ Սա իր հատակագծային հորինվածքով և կառուցողական ձևերով նման է նախորդին, այն տարբերությամբ, որ սրա հյուսիսային և հարավային պատերն ավելի հաստ են (1,2 մ)։ Այստեղ ևս պահպանվել են միայն պատերի հիմնամասերը, որոնք լցված են մեծ քարաբեկորներով։ Կացարանի ներսում, 0,3 մ հզորությամբ շերտից, հայտնաբերվեցին միայն խեցեղենի սակավաթիվ բեկորներ։ № 4 կացարանը դռան բացվածքով միացած չէ համալիրին և առանձին շինություն է։

№ 5 կացարանը գտնվում է № 4-ից 18 մ հյուսիս և զբաղեցնում է 29,16 քառ. մ մակերես։ Սրա երեք պատերը շարված են անմշակ որձաքարերի երկու շարքով, որոնց միջև լցված է հողե լիցք, իսկ հյուսիսայինը՝ հենված է արհեստական կտրվածքին, որի հաստությունը արևմտյան հատվածում 1 մ է։ Դռան բացվածքը հարավային պատի արևելյան անկյունամասում է և ունի 1 մ լայնություն։ Քառանկյունաձև հատակագծով կացարանի հատակը բնական ավազաքարի շերտի վրա դրված սալիկներից է։ Այստեղ ևս, ինչպես № 1 կացարանում, հյուսիսային պատի դիմաց բացվեց 45 սմ բարձրությամբ, 65 սմ լայ-

---

14 Պեղումները՝ Ռ. Թորոսյանի (չհրատարակված նյութեր)։

15 Պեղումները՝ Ս. Եսայանի (չհրատարակված նյութեր)։

16 Ս. Ա. Եսայան, նշվ. թեզիսներ, էջ 9—10։

17 С. А. Есаян, Ереван, 1964, с. 40.

18 Պեղումները՝ Արգիշտիխինիլիի հնագիտական արշավախմբի (չհրատարակված նյութեր)։

նությամբ քարաշար նստարան։ № 5 կացարանի մշակութային շերտն ուներ 0,55—1 մ հզորություն, որտեղից հայտնաբերվեցին գորշ փայլեցված ու հասարակ խեցանոթների բեկորներ, սանդեր, սանդակոթեր, տրորիչներ և կենդանիների ոսկորների մնացորդներ։

№ 6 կացարանը գտնվում է № 5-ի հյուսիսային կողմում։ 21,5 քառ. մ զբաղեցնող այս կացարանի երեք պատերը շարված են ճիշտ նախորդի նման և ունեն 1 մ հաստություն, իսկ հյուսիսայինը՝ հենված է բնական կտրվածքին։ Այստեղ ևս դռան 1 մ լայնությամբ բացվածքը հարավային պատի արևելյան անկյունամասում է։ 20 սմ հաստությամբ կավածեփ հատակը բնական ավազաքարի շերտի վրա է։ Քառանկյունաձև հատակագծով այս կացարանի հյուսիս-արևմտյան անկյունում բացվեց 56×56 սմ² մակերեսով քարաշեն օջախ, որի մոտից գտնվեցին կավաշեն սաջերի բեկորներ։ Մշակութային շերտի հաստությունը 1—1,2 մ է, որտեղից գտնվեցին գորշ փայլեցված և հասարակ, տարատեսակ խեցանոթների բեկորներ, աղորիքներ, քարե նետասլաք ու կենդանիների ոսկորների մնացորդներ։

№ 7 կացարանը գտնվում է № 6-ի արևմտյան կողմում։ Սրա արևելյան պատը կիսով չափ կից է նախորդի արևմտյան պատին։ 12 քառ. մ մակերեսով, քառանկյունաձև հատակագծով կացարանի պատերը շարված են ճիշտ նախորդների նման։ Այստեղ ևս դռան բացվածքը հարավային պատի արևելյան անկյունամասում է և ունի 0,7 մ լայնություն։ Կացարանի 20 սմ հաստությամբ կավածեփ հատակը բնական ավազաքարի շերտի վրա է։ Հատակի կենտրոնական մասում բացվեց քարաշեն (50×50 սմ) օջախ։ Այս կացարանի մշակութային շերտի հզորությունը հասնում է 1մ-ի, որտեղից գտնվեցին սակավաթիվ խեցանոթների բեկորներ և կենդանիների ոսկորների մնացորդներ։

Այսպիսով, Քեթիի ամրոց-բնակատեղիի պեղումներով հայտնաբերվեցին աշխատանքային գործիքներ, զենքեր, առօրյա կենցաղում օգտագործված խեցեղեն և այլ առարկաներ։ Աշխատանքային գործիքները հիմնականում երկրագործության, հացահատիկային մթերքների մշակման, մանածագործության ու կաշեգործության բնագավառներում օգտագործված քարե և ոսկրե իրեր են։ Մանգաղների ներդիրները պատրաստված են կայծքարից և ունեն քառանկյան տեսք (աղ. 1, նկ. 8, 12, 13)։ Մակերեսները մշակված են հարթ հարդարմամբ, իսկ բանող մասերին, սեղմման եղանակով, տրված է ատամնավոր տեսք։ Նշենք, որ երկաթի դարաշրջանում, չնայած մետաղե մանգաղների լայն տարածմանը, դրանց զուգահեռ օգտագործվել են հնուց ավանդաբար եկող քարե նմուշները։ Դրանք հայտնի են Սևանի ավազանի հուշարձաններից[19], Նոյեմբերյանից[20], Խրտանոցից[21] և այլ վայրերից։ Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանների հուշարձաններից (Թմբադիր, Պիլոր-պատ, Սևսև քարի թախտ, Բերդատեղ)[22] հայտնաբերված նմուշները վկայում են, որ բաղադրյալ մանգաղները հարատևել են մինչև մ. թ. ա. I հազարամյակի կեսերը։ Այդ է վկայում նաև Քեթիի ամրոցի № 1 կացարանից հայտնաբերված, գետաքարից պատրաստված կոնաձև սրաքարը (աղ. 1, նկ. 21)։

«Աղնախների» հնավայրից հայտնաբերված քարե գործիքների ժողովածուում հետաքրքիր խումբ են կազմում հացահատիկային մթերքների մշակման նպատակներին ծառայող գործիքները՝ աղորիքները, սանդերը, սանդակոթերը և տրորիչները։ Նավակաձև աղորիքները պատրաստված են ծակոտկեն որձաքարից (աղ. 1, նկ. 5, 6, 9, 10)։ Սանդերը նույնպես նշված քարատեսակից են և ունեն գնդի տեսք (աղ. 1, նկ. 11, 14)։ Սանդակոթերը պատրաստված են գետաքարից և գլանաձև են (աղ. 1, նկ. 20), իսկ նույն գետաքարից տրորիչ-

---

19 Б. Б. Пиотровский, Кармир-блур, 1, Ереван, 1950, с. 27—31.

20 Т. С. Хачатрян, Орудия труда эпохи поздней бронзы и раннего железа («Հայաստանի պատմության պետական թանգարանի աշխատություններ», հ. 5, Երևան, 1959, էջ 209)։

21 А. А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, с. 96.

22 С. А. Есаян, Древнейшая культура племен..., с, 164.



ներն ունեն կլորացող անկյուններով երկարուկ քառանկյունու տեսք (աղ. 1, նկ.17, 18, 19)։ Ներկայացված գործիքները Քեթիում միշտ հանդիպ են գալիս միասին, որոնց բազմաթիվ զուգահեռները հայտնի են Շիրակավանում[23], Դվինում[24], Կարմիր բլուրում[25], հյուսիս-արևելյան Հայաստանի Պոպլոզգաշ հնավայրերում[26] և բազմաթիվ այլ հուշարձաններում։

23 Պեղումները՝ Ռ. Թորոսյանի, Օ. Ենկիկյանի, Լ. Պետրոսյանի (չհրատարակված նյութեր)։

24 К. Х. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ереван, 1977, с. 35, рис. 53.

25 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, табл. XVIII.

26 С. А. Есаян, նշվ. աշխ., էջ 38, աղ. 25։

Քեթիի քարե առարկաների մեջ կան նաև երկու ծանրոց-կախիկներ, որոնցից մեկը պատրաստված է տուֆից և ունի անվակի տեսք (աղ. 1, նկ. 15), իսկ մյուսը՝ կայծքարի շեղբից, որի վերին մասում արված է ոչ խորը փորվածք (աղ. 1, նկ. 23)։ Չնայած հնագիտական գտածոներում ջուլհակի դազգահ չի հայտնաբերվել, բայց ծանրոց-կախիկները, գործվածքեղենի դաջվածքները և դրանց մնացորդներն անառարկելիորեն վկայում են դազգահի գոյության փաստի մասին։ Մանածագործության վկայությունն են նաև ինչպես Քեթիից (աղ. 1, նկ. 4), այնպես էլ բազմաթիվ այլ հուշարձաններից հայտնաբերված իլիկի ոսկրե և քարե գլուխները[27]։ Ոսկրից պատրաստված մյուս իրը ծակիչն է (աղ. 1, նկ. 3)։ Ոսկրե նման ծակիչներ հայտնի են Մեծամորից[28] և այլ հնավայրերից։ Ծակիչներն օգտագործվել են կաշեգործության բնագավառում։ Մեր հավաքածուում կան նաև ամանի տուֆե հենակ (աղ. 1, նկ. 22) և գետաքարե երկարուկ, քառանկյունաձև կոկիչ (աղ. 1, նկ. 16)։

Զենքերն այս հնավայրում ներկայանում են քարե և ոսկրե նետասլաքներով։ Հետաքրքիր նմուշ է վանակատից պատրաստված, եռանկյունաձև, հիմնամասում կիսաշրջանաձև հանվածքով նետասլաքը (աղ. 1, նկ. 7)։ Սա ևս իր նմանակներն ունենալով բրոնզի դարաշրջանի հուշարձաններում, հարատևել է մինչև մ. թ. ա. I հազարամյակի կեսերը, որի զուգահեռները նույնպես հայտնի են վերը հիշատակված հուշարձաններից։ Նետասլաքների մյուս նմուշները ոսկրից պատրաստված, երկարավուն, կտրվածքում շրջանաձև, երկարուկ բարակող պոչիկով զենքերն են (աղ. 1, նկ. 1, 2)։ Սրանց վաղ տեսակները հայտնի են մ. թ. ա. III հազարամյակի հուշարձաններից՝ Շենգավիթից[29], Խիզանաատ-Դորայի C և B շերտերից ու դրանց համաժամանակյա դամբարաններից[30]։ Նույն ձևի ոսկրե նետասլաքներ հայտնաբերվել են նաև Ստեփանավանի և Կամոյի[31] մ. թ. ա. IX—VIII դդ. թվագրվող դամբարաններից, որոնք իրանի քառակողությամբ և պոչուկի ձևավորմամբ փոքր-ինչ տարբերվում են Քեթիի նմուշներից։ Ոսկրե նման նետասլաքներ գտնվել են Նորաշենի[32] և Շիրակավանի[33] հնավայրի վաղ հայկական ժամանակաշրջանի շերտերից։ Դրանք հայտնի են նաև Վրաստանի երկաթի դարաշրջանի հուշարձաններից Սամթավրո, Բեշտաշեն[34], Թեթրից-Կլեբի[35] և Մնորի[36]։

Այսպիսով, քննված նետասլաքները որպես նետվող զենքի տեսակներ, իրենց գոյությունը սկսում են մ. թ. ա. III հազարամյակից և մասնակի փոփոխություններով հարատևում մինչև վաղ հայկական ժամանակաշրջանը։

Ինչպես տեսանք, Քեթիի կիկլոպյան ամրոցից ձեռք բերված քարե և ոսկրե գործիքներն ու զենքերն ունեն ժամանակագրական լայն ընդգրկում, ուստի դրանք չեն կարող հիմք հանդիսանալ տվյալ շերտի ստույգ թվագրման համար։

---

27 Ս. Ս. Խնկիկյան, Բրոնզեդարյան Հայաստանի արհեստները, Երևան, 1977, էջ 76։

28 Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, էջ 48, նկ. 66։

29 Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան համայնական հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 165։

30 К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры южного Кавказа, Л., 1970, с. 74, рис. 26.

31 Т. Хачатрян, Каменные ящики Степанавана («Հայաստանի պետական պատմության թանգարանի աշխատություններ», հ. 5, էջ 107, նկ. 38)։

32 С. А. Есаян, Древняя культура племен..., с. 76, табл. 62.

33 Պեղումները՝ Ռ. Թորոսյանի, Օ. Խնկիկյանի, Լ. Պետրոսյանի (չհրատարակված նյութեր)։

34 Т. Н. Чубинишвили, Археологические памятники Мцхета, Тбилиси, 1957, рис. 16.

35 К. Н. Пицхелаури, Итоги исследования памятников эпохи поздней бронзы и раннего железа («Труды Кахетской археологической экспедиции», I, Тбилиси, 1969, табл. XII, рис. 4).

36 Ш. Ш. Дедабрешвили, Курганы Алазанской долины («Труды Кахетской археологической экспедиции», II, Тбилиси, 1979, табл. 41).

Այս առումով կարևոր են խեցեգործական արտադրանքի նմուշները՝ տարատեսակ մեծ և փոքր խորը թասերը, քրեղանները, կճուճները, գավաթները։ Թասերն ունեն ուղղահայաց կողեր, մոխրագույն փայլեցված մակերես։ Դրանք զարդարված են միաշար կամ բազմաշար ներճկված գծերով, երբեմն ակոսներով (աղ. 1, նկ. 26, 27, 28)։ Նման մի թաս էլ հայտնաբերվել է Քեթիի № 40 դամբարանից։ Ներկայացվող թասերի զուգահեռները հայտնի են Հայաստանի վաղ երկաթի ժամանակաշրջանով թվագրվող մի շարք հուշարձաններից՝ Արթիկից[37], Շիրակավանի բնակատեղիից և համաժամանակյա դամբարաններից[38], Կարմիր բլուրի նախաուրարտական շերտից[39], Թազաքենդից[40] և Մեծամորի № 1 դամբարանից[41]։ Թաս-քրեղաններն ունեն սև և գորշ արտաքին, թույլ, երբեմն անփայլ, խամրած մակերես, կիսագնդաձև իրան, դեպի դուրս ճկված շուրթ։ Իրանի ուսերը զարդարված են հորիզոնական ակոսներով (աղ. 1, նկ. 29, 30, 31)։ Դրանցից մեկի (աղ. 1, նկ. 29) իրանի ստորին մասը զարդարված է փայլեցմամբ արված ուղղահայաց հոծ գծերով։ Մեծ թվով նման քրեղաններ են հայտնաբերվել և Քեթիի դամբարանադաշտի № 33, 34, 35 և 36 դամբարաններից։ Ուսումնասիրվող քրեղաններն իրենց ձևերով և զարդանախշման եղանակներով սերտորեն առնչվելով ուշ բրոնզեդարյան քրեղանների հետ, միևնույն ժամանակ, դրանցից տարբերվում են արտաքին ավելի հասարակ՝ գորշ տեսքով և ակոսաղարդերի գերակշռությամբ։ Այս քրեղաններն իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն Արթիկի մ. թ. ա. X—IX դդ. թվագրվող № 208, 209, 212, 294, 295 դամբարաններում[42] ու Շիրակավանի բնակատեղիի վաղ երկաթի ժամանակաշրջանով թվագրվող շերտում և դամբարաններում[43]։ Նույնաձև քրեղաններ հայտնաբերվել են Դիլիջանի ջրամբարի տարածքում պեղված մ. թ. ա. II հազարամյակի վերջով, I հազարամյակի սկզբով թվագրվող № 1 դամբարանից[44] և Դիլիջանի Կամոյի փողոցում պեղված մ. թ. ա. I հազարամյակի սկզբով թվագրվող դամբարաններից[45]։ Քեթիի քրեղաններն իրենց ձևերով հար և նման են նաև հյուսիս-արևելյան Հայաստանի Բուղաքարա[46] և Ցամաքաբերդի № 2 դամբարանների նյութերին[47]։

Ուշագրավ է № 1 կացարանի 0—0,3 մ խորությունից հայտնաբերված կարմիր փայլեցված մակերեսով, ներս սեղմված վերին մասով, թեթևակի դուրս թեքված և կլորացող շուրթով թասի բեկորը, որի իրանի վրա արված է հորիզոնական ակոսագոտի (աղ. 1, նկ. 25)։ Սա իր ձևերով նման է Ջրաշենից[48] (մ. թ. ա. V—IV դդ.), Շահլամա II-ի № 8 շուրֆի վերին շերտից[49] (մ. թ. ա. VI—V դդ.) և Նորաշենի բերդից[50] (մ. թ. ա. VI—IV դդ.) հայտնա-

---

37 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 252, рис. 161.

38 Պեղումները՝ Ռ. Թորոսյանի, Օ. Խնկիկյանի, Լ. Պետրոսյանի (չհրատարակված նյութեր)։

39 А. А. Мартиросян, Город Тейшебаини..., с. 50, рис. 21.

40 Ս. Ա. Եսայան, Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, № 2, Երևան, 1969, աղ. 14, նկ. 20։

41 Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան, Մեծամոր, էջ 167, նկ. 160։

42 Т. С. Хачатрян, Артикский некрополь, Ереван, 1979, с. 194 и сл.

43 Պեղումները՝ Ռ. Թորոսյանի, Օ. Խնկիկյանի, Լ. Պետրոսյանի (չհրատարակված նյութեր)։

44 Լ. Լ. Կարապետյան, Ա. Ն. Շահինյան, Հնագիտական հայտնագործություններ Դիլիջանում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 12, էջ 69)։

45 Ս. Ա. Եսայան, Հ. Ա. Հովհաննիսյան, Կատալոգ Դիլիջանի երկրագիտական թանգարանի հնագիտական իրերի, Երևան, 1969, աղ. 23։

46 С. А. Есаян, Древняя культура племен..., с. 189, табл. 131.

47 Պեղումները՝ Հ. Մնացականյանի, Հայաստանի պատմության պետական թանգարան, գույք № 1922/31։

48 А. О. Мнацаканян, Г. А. Тирацян, Новые данные о материальной культуре древней Армении (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 8, աղ. 7, նկ. II)։

49 С. А. Есаян, Древняя культура племен..., с. 31, табл. 17.

50 Նույն տեղում, էջ 75, աղ. 61։

բերվածներին և վկայում է, որ Քեթիի ամրոցում կյանքը հարատևել է մինչև վաղ հայկական ժամանակաշրջանը՝ մ. թ. ա. VI—IV դդ.։

Քեթիի կիկլոպյան ամրոցից հայտնաբերված խեցեղեն արտադրանքի մեջ մեծ թիվ են կազմում կճուճները, որոնք բաժանվում են երկու տեսակի։ Առաջին տեսակին են պատկանում թույլ սև կամ դորշ փայլեցված մակերեսով, ուռուցիկ իրանով, միջին բարձրությամբ, գլանաձև վզով, դեպի դուրս ճկված շուրթով, անզարդ և զարդարուն կճուճները, որոնք իրենց ձևով նմանվում են փոքր կարասներին (աղ. 1, նկ. 32)։ Այսպիսի կճուճներ են հայտնաբերվել Հայաստանի և Անդրկովկասի վաղ երկաթի ժամանակաշրջանի Արթիկի № 213, 420 և այլ դամբարաններից[51], Շիրակավանի բնակատեղիից ու դամբարաններից[52], Կարմիր բլուրի № 5 դամբարանից[53], Թբելիից[54], Ուշ-Թեփեից[55] և այլ հնավայրերից։ Տեղին է նշել, որ Քեթիի կճուճներն իրենց վզերի բարձրությամբ հիշեցնում են նաև ուշ բրոնզի II փուլի խեցեղենին, որը դրանց ավանդական կապերի վկայությունն է։ Երկրորդ տեսակին են պատկանում ավազախառն կավից պատրաստված, կոպիտ խոհանոցային կճուճների բեկորները, որոնք ունեն դուրս ճկված կամ թեքված շուրթեր (աղ. 1, նկ. 33—38)։ Սրանց ուսերը զարդարված են հորիզոնական ուղղագիծ, ալիքաձև գծերով և հատիկաշարերով։ Հայաստանի նախնադարյան տեղաբնիկների առօրյա կենցաղում օգտագործված այս կճուճները լայնորեն տարածված լինելով ուշ բրոնզեդարյան հուշարձաններում, գրեթե անփոփոխ ձևերով հարատևել են վաղ երկաթի և նրա լայն տարածման ժամանակաշրջանում։

Խեցեղեն իրերի շարքում առկա է նաև թույլ սև փայլեցված մակերեսով, համակենտրոն շրջաններով զարդարված խեցանոթի մի բեկոր (աղ. 1, նկ. 35), որը հետաքրքիր է իր զարդանախշերով։ Համակենտրոն շրջանների տեսքով զարդանախշը ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանների հուշարձաններում եզակի չէ։ Այդպիսի նախշերով են զարդարված ինչպես Արթիկի II խմբին պատկանող[56], Շիրակավանի մ. թ. ա. II հազարամյակի վերջով և I հազարամյակի սկզբով թվագրվող բնակատեղիի շերտերից և դամբարաններից[57], այնպես էլ 1929 թ. Լենինականից հայտնաբերված որոշ խեցանոթներ[58]։ Հայաստանի այլ շրջանների հուշարձաններից համակենտրոն շրջաններով զարդարված կավամաններ են հայտնի Ռեգկին Լագերից (մ. թ. ա. IX—VIII դդ.)[59], Աստղի բլուրից (մ. թ. ա. IX—VIII դդ.)[60], Լոռի բերդից (մ. թ. ա. XI—X դդ.)[61], Դարանի ամրոցի վաղ երկաթի ժամանակաշրջանով թվագրվող փոսորակից[62] և Գորիսի շրջանի ուշ բրոնզի և վաղ երկաթի ու դրա լայն տարածման ժամանակաշրջաններին պատկանող դամբարաններից[63]։ Վրաստանում նման զարդանախշերով խեցանոթներ հայտնի են Գրմա-Գելի[64] և առա-

---

51 Т. С. Хачатрян, Артикский некрополь, с. 196 и сл.

52 Պեղումները՝ Ռ. Թորոսյանի, Օ. Խնկիկյանի, Լ. Պետրոսյանի (չհրատարակված նյութեր)։

53 А. А. Мартиросян, Город Тейшебаини..., с. 62, рис. 28 б.

54 «Тбилиси I, Археологические памятники», Тбилиси, 1978, с. 86—130.

55 А. А. Иессен, Поселение Уч-тепе («Материалы и исследования по археологии, № 125, М.—Л., 1965, с. 121, рис. 17).

56 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака..., с. 226, рис. 139.

57 Պեղումները՝ Ռ. Թորոսյանի, Օ. Խնկիկյանի, Լ. Պետրոսյանի (չհրատարակված նյութեր)։

58 Պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում, գույք № 22/32։

59 А. А. Мартиросян, Армения в эпоху..., с. 200, рис. 78.

60 С. А. Есаян, Астхиблурский могильник (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1968, № 6, էջ 83)։

61 С. Г. Деведжян, Лори-берд, I, Ереван, 1981, табл. XIV, XVI.

62 Է. Վ. Խանզադյան, Էլառ-Դարանի, Երևան, 1979, աղ. 16, նկ. 15։

63 Պեղումները՝ Օ. Խնկիկյանի (չհրատարակված նյութեր)։

64 Д. Коридзе, Археологические памятники Тбилиси II, Тбилиси, 1955 (на груз. яз.).

վել մեծ քանակությամբ Մելի-Գելի սրբարանից[65], որոնք թվագրվում են ուշ բրոնզի վաղ փուլով։

Նկատի ունենալով մասնագիտական գրականության մեջ վերոհիշյալ զարդատեսակի առաջացման և հարատևման վերաբերյալ գոյություն ունեցող որոշ տարակարծություններ, հարկ ենք համարում համառոտակի անդրադառնալ այդ հարցին։ Այսպես, Տ. Խաչատրյանը հանգել է այն համոզման, որ զարդի այս տեսակը սկիզբ է առել ուշ բրոնզի դարում և գոյատևել է հաջորդ ժամանակաշրջաններում[66]։ Է. Խանզադյանն այն համարում է մ. թ. ա. XIII—VIII դդ. սիրված զարդամոտիվ[67]։ Կ. Պիցխելաուրին գտնում է, որ Արևելյան Վրաստանում այն հանդես է գալիս մ. թ. ա. II հազարամյակի կեսերում և անհետանում է մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսի առաջին դարերում[68]։ Այնուհետև նա նշում է, որ տվյալ ժամանակաշրջանում, ինչպես Առաջավոր և Փոքր Ասիան, այնպես էլ Կենտրոնական Անդրկովկասը ենթարկվել են ինչ-որ անհայտ ազդեցության[69]։ Մեր կարծիքով, տվյալ զարդատեսակի արմատները տեղական են և դալիս են միջին բրոնզեդարյան փուլից։ Սրա վկայությունն են Թրիալեթիի[70] և Այգեշատի դամբարաններից[71] ու այլ հուշարձաններից հայտնաբերված սև փայլեցված կճուճների վրա արված նույնանման զարդերը, որոնք, ինչպես տեսանք, հարատևել են մինչև մ. թ. ա. I հազարամյակի կեսերը։ Այս կարծիքի օգտին է խոսում նաև տվյալ զարդատեսակի հետ միևնույն հորինվածքում հանդես եկող քառանկյունաձև, ցանցկեն զարդը (Աստղի բլուր, Լոռի բերդ, Մելի-Գելի), որը նույնպես գոյություն ունի Թրիալեթիի № 45 դամբարանաբլուրի խեցեղենի մեջ[72]։ Այսպիսով, բերված նյութերը ցույց են տալիս, որ քննվող զարդատեսակը կոնկրետ թվագրության համար հիմք հանդիսանալ չի կարող։

Քեթիի կիկլոպյան ամրոցի № 1 կացարանի հյուսիսային պատի մոտ գտնված օջախի միջից հայտնաբերված սաջերի բեկորները (աղ. 1, նկ. 39) ցածր ուղղահայաց կողերով, լայն հարթ հատակով կավաշեն իրեր են, որոնք ծառայել են հաց թխելու, հացահատիկներ բովելու նպատակին։ Մեր ձեռքի տակ եղած նմուշի կողի վերին մակերեսը զարդարված է օվալաձև փոսիկներով։ Սաջերի հնագույն օրինակներ հայտնի են դեռևս ուշ նեոլիթյան[73] և էնեոլիթյան[74] հուշարձաններից։ Ամենուր դրանք հանդիպել են տնտեսական օջախների մոտ կամ դրանց մեջ։ Նման սաջերի բազմաթիվ օրինակներ են հայտնաբերվել Շիրակավանի բնակատեղիի շերտերից[75], Կարմիր բլուրից[76], Մեծամորից[77], Արգիշտիխինիլիից[78] և այլ հուշարձաններից։

65 Կ. Հ. Пицхелаури, Основные проблемы истории племен Восточной Грузии, Тбилиси, 1973, табл. XXXI—XXXIII (на груз. яз).

66 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, с. 224.

67 Է. Վ. Խանզադյան, Էլար-Դարանի..., էջ 84։

68 Կ. Հ. Пицхелаури, Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, 1979, с. 94—95.

69 Նույն տեղում, էջ 95։

70 Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, Тбилиси, 1941, табл. LXXIV, Э. М. Гогадзе, Периодизация и генезис курганной культуры Триалети, Тбилиси, 1972.

71 Պեղումները՝ Ռ. Թորոսյանի (չհրատարակված նյութեր)։

72 Л. Жоржикашвили, Э. Гогадзе, Памятники Триалети в эпоху ранней и средней бронзы, Тбилиси, 1974, табл. 104.

73 Ս. Հ. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 141, աղ. 39, նկ. 1, 2։

74 Ռ. Մ. Թորոսյան, Թեղուտի վաղ երկրագործական բնակատեղին, Երևան, 1976, աղ. 5։

75 Պեղումները՝ Ռ. Թորոսյանի, Օ. Խնկիկյանի, Լ. Պետրոսյանի (չհրատարակված նյութեր)։

76 Ս. Ա. Եսայան, Երևան քաղաքի պատմության թանգարանի հնագիտական իրերի կատալոգ, III, աղ. 39, նկ. 33—41։

77 Է. Խանզադյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, աղ. 21։

78 Պեղումները՝ Արգիշտիխինիլիի հնագիտական արշավախմբի (չհրատարակված նյութեր)։

Այսպիսով, Քեթիի ամրոցից հայտնաբերված կոնկրետ թվագրվող և այլ նմուշների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տվյալ շերտն իր մշակույթի բնորոշ առանձնահատկություններով համապատասխանում է Հայաստանի վաղ երկաթի դարաշրջանի մշակույթին և թվագրվում է մ. թ. ա. X—IX դդ.։ Միևնույն ժամանակ, այդ շերտի վերին 0—0,3 մ խորությունից հայտնաբերված թասերի բեկորները վկայում են, որ այստեղ կյանքը հարատևել է մինչև մ. թ. ա. VI—IV դդ.։

ЦИКЛОПИЧЕСКАЯ КРЕПОСТЬ с. КЕТИ

ЛЕВОН ПЕТРОСЯН

Резюме

Циклопическая крепость с. Кети находится в 2 км северо-западнее одноименного села Ахурянского района Армянской ССР, в местности «Сгнахнер». Она занимает площадь около 2 га и обнесена двухрядной стеной. Эта крепость принадлежит к числу широко распространенных на Армянском нагорье, в частности в Шираке, крепостей эпохи поздней бронзы и раннего железа.

Открытые при исследовании крепости жилища представляют собой прямоугольные, сложенные из одного или двух рядов необработанных камней помещения. В них раскопаны хозяйственные очаги, культовые уголки, идолы, орудия труда из камня и кости и многочисленные образцы керамического производства. Их изучение значительно дополняет наши знания о материальной и духовной культуре первобытных аборигенов Ширака. В результате исследования установлено, что крепость основана в X в. до н. э. и просуществовала до VI—IV вв. до н. э.